

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ՄԱՍԻՆ*

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Շնորհապարդ Եղբայր.

Մենք կմտածեինք պատասխանել Ձեր 24 փետրվար թվակիր գրության, այս տարվան ընթացքին ծրագրված միջեկեղեցական հանդիպումներու կապակցությամբ, երբ ամսույս սկիզբները Մոսկվայի Եթովպիո դեսպանը պաշտոնապես Մեկի տեղեկացուց, թե Եթովպիո Կայսեր նախաձեռնությամբ և Եթովպական Եկեղեցվո Պատրիարքի հրավերով, երեք տիեզերական ժողովներն ընդունող եկեղեցիներու պետերը պիտի հրավիրվին խորհրդակցությանց հառաջիկա հունիսին, Ադդիս-Աբեբայի մեջ:

Մենք սկզբունքային համաձայնություն տվինք անձամբ մասնակցելու վերոհիշյալ խորհրդակցության, և ցանկացանք իմանալ նախօրոք, թե ի՞նչ ծրագիր պիտի ունենա այդ հանդիպումը և ո՞ր եկեղեցիներու պետերը անձամբ պիտի մասնակցին: Կսպասենք պաշտոնական հրավերին և վերոհիշյալ հարցերու պարզաբանման, վերջնապես կարողանալ որոշելու համար անձամբ Մեր մասնակցությունը և նշանա-

---

*Հրապարակում են Մայր Աթոռ Ս. Էջիմածնի և Անթիլիասի Աթոռի միջև փոխանակված պաշտոնական նամակների երկրորդ շարքը, 1965 թվականի հունվարին Ադդիս-Աբեբայում կայանալիք միջեկեղեցական ժողովին Հայ Եկեղեցու մասնակցության կապակցությամբ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ապրիլ ամսվա մեջ հրավեր ստացավ Նորին Վեհափառություն Եթովպիայի Կայսր Հայլե Սելասիե Ա-ից և Հարեշ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Տ. Բասիլիոս Բ-ից՝ մասնակցելու տիեզերական առաջին երեք ժողովներն ընդունող եկեղեցիների նոգևոր պետերի խորհրդակցության, որը կայանալու է Ադդիս-Աբեբայում:

Նորին Ս. Օծությունն Իր սկզբունքային համաձայնությունը տվեց Կայսեր և Պատրիարքի հրավերներին, որպես Գերագույն Պետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, և ելնելով այն սկզբունքից, որով անհրաժեշտ է, որ մեր Եկեղեցու պատվիրակությունը լինի մեկ և անբաժան պատվիրակություն՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ և առաջնորդված Երուսաղեմի ողջագուրման ոգով, կանոնական և նիշտ գտավ, որ նման բարձր մակարդակի միջեկեղեցական հանդիպման ժամանակ, Իր կողքին գտնվեն մեր Եկեղեցու նվիրապետական մասնավոր Աթոռների գահակալները:

կելու համար Հայաստանյայց Եկեղեցին ներկայացնող մեր պատվիրակության անդամները: Մենք մտադիր էինք այս մասին գրել Ձերդ Սրբության, ինչպես նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո սրբազան Մեր պատրիարք եղբայրներուն, որպեսզի այդ բարձր մակարդակի հանդիպումներուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին գտնվեին մեր Եկեղեցվո նվիրապետական երեք մասնավոր Աթոռներու գահակալները:

Ահա սակայն առջի օր, ստացանք Ժընևի Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կեդրոնեն հայր Պոլ Վերկեսի մեկ գրությունը 1 ապրիլ թվակիր, որով հայր սուրբը կհայտնե, թե Ադդիս-Աբեբա հրավիրված է նաև Ձերդ Սրբությունը իբրև հայոց Կիլիկյան Աթոռի Կաթողիկոս, ինչ որ Մեզ գոհունակություն պատճառեց:

Քանի որ Ադդիս-Աբեբայի միջեկեղեցական այս հանդիպումին, Մեր և մեր նվիրապետական Աթոռներու գահակալներու ներկայությամբ, Հայաստանյայց Եկեղեցին է որ պիտի մասնակցի որպես մեկ և անբաժան Ազգային Եկեղեցի, բնականաբար անհրաժեշտ պետք է նկատենք, որ մեկ ու անբաժան Հայաստանյայց Եկեղեցվո պատվիրակությունը ըլլա մեկ և անբաժան պատվիրակություն, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, որն Իր հետ և Իր կողքին կունենա մեր Եկեղեցվո նվիրապետական մասնավոր Աթոռներու գահակալները, այսինքն Ձերդ Սրբությունը և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսո ամենապատիվ սրբական պատրիարքները: Հրաշալի առիթ մը պիտի հանդիսանա այս, մի անգամ ևս հայտնի դարձնելու և՛ մեր ժողովուրդին, և՛ ամբողջ աշխարհին, թե ամրակուռ է Հայ Եկեղեցվո կանոնական միությունը, թե ամրակուռ է Հայ Եկեղեցվո նվիրապետական Աթոռներու գահակալներու միասնությունը և եղբայրությունը:

Ուրեմն, Սիրեցյալ Եղբայր Մեր, այս բոլորը հանձնելով Ձեր ուշադրությանը, կսպասենք Ձեր հատուկ գրության, որով պիտի հաճեիք Ձեր համաձայնությունը տալու վերոհիշյալ ոգիով և ձևով մասնակցելու Ադդիս-Աբեբայի միջեկեղեցական ժողովին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին:

Սպասելով Ձեր շուտափույթ պատասխանին, մնամք սիրո ողջունիվ և Ձերդ Սրբության աղոթակից Եղբայր՝

ՎԱՉԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

27 ապրիլ 1964

Այս մտածումով և այս իմաստով, Նորին Ս. Օծությունը հրավիրեց Տաճն Կիլիկիո Տ. Խորեն Ա Կաթողիկոսին, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի սրբազան պատրիարքներին, որ միասնաբար, մեկ և անբաժան պատվիրակությամբ մասնակցեն Ադդիս-Աբեբայի ժողովին:

Խորեն Ա Կաթողիկոսն իր մայիս 27 թվակիր պատասխան նամակում ըստ էության մերժում էր Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական հրավերը, հայտնելով իր տեսակետը, թե «երկու Աթոռներու առանձին-առանձին պատվիրակությամբ ներկայանալու ձևը չի հակասեր մեր միասնական ոգիին ու դիրքին...»:

Ամենայն Հայոց Հայրապետը Իր օգոստոս 18 թվակիր նամակով վերստին դիմում է Տաճն Կիլիկիո Գահակալին նույն հարցով, նույն ուսենալով, որ Անթիլիասը կանդրադառնա և կորդեգրի ոչամիտ և կանոնական ուղի կեցվածք:

Ավա՜ղ, սակայն, հոկտեմբեր 29 թվակիր իր նամակում Տ. Խորեն Ա Կաթողիկոսը պնդում է, որ Անթիլիասի Աթոռը կմասնակցի Ադդիս-Աբեբայի միջեկեղեցական ժողովին առանձին պատվիրակությամբ:

Ի լուսաբանումն հանրային կարծիքի, հրապարակում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Անթիլիասի Աթոռի միջև փոխանակված սույն պաշտոնական նամակները:

«Էջմիածին» ամսագրի խմբագրություն

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհապարդ Եղբայր ի Քրիստոս.

Շնորհակալությամբ ստացած ենք Ձերդ Վեհափառության 27 ապրիլ 1964 թվակիր գրությունը, որով կհայտնեիք, թե Մոսկվայի Եթովպական դեսպանը պաշտոնապես տեղեկացուցած է Ձեզի, թե Եթովպիո Կայսեր նախաձեռնությամբ և Եթովպական Եկեղեցվո Պատրիարքին հրավերով, տիեզերական առաջին երեք ժողովները ընդունող եկեղեցիներու հոգևոր պետերը եկեղեցական համագումարի մը պիտի հրավիրվին հառաջիկա հունիսին, Ադդիս-Աբեբայի մեջ, և կավելցնեիք, թե Դուք Ձեր սկզբունքային համաձայնությունը տված եք արդեն, անձամբ մասնակցելու համար վերոհիշյալ համագումարին:

Այս առթիվ հայտնենք, որ շաբաթներ առաջ Մեզի ալ ներկայացած էր Լիբանանի Եթովպական ընդհանուր հյուպատոսը և հայտնած, որ Մենք ևս պիտի հրավիրվեինք նույն ժողովին և խնդրած էր Մեզմե ունենալ Մեր կարծիքը այդ մասին: Տվինք Մեր սկզբունքային համաձայնությունը, հանուն Կիլիկիո Ս. Աթոռին գլխավորելու պատվիրակություն մը և երթալու Ադդիս-Աբեբա: Փափաքեցանք նախապես տեղեկանալ համագումարի օրակարգին, կազմակերպված ձևին և հարակից այլ խնդիրներու մասին, ըստ այնմ կազմելու համար Մեզի ընկերանալիք պատվիրակությունը:

Առանձին պատվիրակությամբ Ադդիս-Աբեբա երթալու Մեր որոշումը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Ս. Աթոռին անկախ դիրքին բնական հետևանքը նկատելով, կուզենք հայտնել Ձերդ Ս. Օծության, որ միջեկեղեցական հարցերու և փոխհարաբերություններու կալվածին մեջ, ինչպես անցյալին, նաև ներկայիս պետք է որդեգրել միասնական կեցվածք, երբ հարցը կվերաբերի Հայաստանյայց մի և անբաժանելի Եկեղեցվո վարկին և ընդհանրական՝ առաքելության, որուն գերագույն շահերը պետք է առաջնորդեն մեր բոլոր մտածումներն ու գործերը:

Մեր համոզումով, երկու Աթոռներու առանձին-առանձին պատվիրակությամբ ներկայանալու ձևը չի հակասեր մեր միասնական ոգիին ու դիրքին, քանի որ մենք ամուր կմնանք Հայաստանյայց Եկեղեցվո միության սկզբունքին վրա:

Մեզի համար մեծ ուրախություն պիտի ըլլա անգամ մը ևս ողջագուրվիլ Ձերդ Սրբության հետ և վերստին ամրացնել սիրո ու եղբայրության ոգին, հոգուտ և ի շահ մեր սիրեցյալ ժողովուրդին, որ ի սփյուռս աշխարհի:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ
27 մայիս 1964

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Օգոստոս 8-ին ստացանք Եթովպիո Կայսեր՝ Նորին Վեհափառություն Հայլե Սելասիեի պաշտոնական հրավերները և հարակից փաստաթղթերը՝ ուղղված Մեզի և Ձերդ Սրբության, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղարկված Մոսկվայի մեծարգո դեսպանին միջոցավ, որով Հայաստանյայց Եկեղեցին կհրավիրվի Ադդիս-Աբեբայի միջեկեղեցական ժողովին (հոկտ. 11—20), որուն հրավիրված են մասնակցելու երեք տիեզերական ժողովներն ընդունող արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիները՝ Հայաստանյայց, Ղպտոց, Սուրիական, Եթովպական և Հնդկական:

Մեր 17 օգոստոս 1964 թվակիր գրությամբ, ուղղյալ Նորին Վեհափառության, Մենք հայտնեցինք Մեր որոշումը, որ Հայաստանյայց Եկեղեցին պիտի մասնակցի

վերոհիշյալ ժողովին, հատուկ պատվիրակությամբ մը, զոր պիտի գլխավորե անձամբ Ամենայն Հայոց Հայրապետը:

Ներկայիս կհաստատենք Մեր 27 ապրիլ 1964 թվակիր Ձեզի ուղղյալ գրությունը և վերստին կհրավիրենք զՁեզ, որ հաճիք ընդունիլ մասնակցելու վերոհիշյալ ժողովին Մեր կողքին, Հայ Եկեղեցվո միակ պատվիրակության կազմին մեջ, Ձեր ներկայացուցիչներուն հետ միատեղ:

Ինչպես հայտներ էինք Ձերդ Սրբության ապրիլ 27-ի և հունիս 5-ի Մեր նամակներով, նման միջեկեղեցական հանդիպումներուն Ամենայն Հայոց Հայրապետությունը և Հայ Եկեղեցվո նվիրապետության մասնավոր Աթոռները պետք է ներկայանան իբրև մեկ և անբաժան Եկեղեցի, և հետևաբար մեկ և անբաժան պատվիրակությամբ:

Ուրեմն՝ ա) Ադդիս-Աբեբայի միջեկեղեցական ժողովին Հայ Եկեղեցին պետք է մասնակցի մեկ պատվիրակությամբ մը, գլխավորված Ամենայն Հայոց Կաթողիկոսով:

բ) Հայ Եկեղեցվո այս միակ պատվիրակության կրնան մաս կազմել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին Գահակալը և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսո մեր Պատրիարքական Աթոռներու Գահակալները, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին:

գ) Միջեկեղեցական ժողովներու առթիվ խմբագրված որոշումներու և հայտարարությանց տակ, հանուն Հայ Եկեղեցվո, կստորագրե Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իբրև Ընդհանրական Հայրապետ Հայաստանյայց Եկեղեցվո:

Արդ, Մենք կրկին կդիմենք Ձերդ Սրբության և կսպասենք, որ շուտափույթ կերպով Ձեր հատուկ և հստակ մեկ գրությամբ հայտնեք Ձեր համաձայնությունը մասնակցելու Ադդիս-Աբեբայի ժողովին, վերոհիշյալ երեք կետերու մեջ արտահայտված ոգիով և ձևով:

Ձեր դրական պատասխանը ստանալով, պիտի կազմենք Հայ Եկեղեցվո պատվիրակությունը և պիտի հղենք Ձերդ Սրբության համապատասխան պաշտոնական հրավերը և հարակից փաստաթղթերը Ադդիս-Աբեբայի ժողովի օրակարգի վերաբերյալ:

Թեև Ադդիս-Աբեբայի ժողովին Ձեր մասնակցության հարցի առնչությամբ Դուք Ձեր 27 մայիս 1964 թվակիր գրությամբ ժխտական պատասխան տված էիք Մեր 27 ապրիլ թվակիր նամակին, այնուամենայնիվ, գիտակցելով սույն ժողովին պատմական նշանակության և կարևորության, Մենք անհրաժեշտ կգտնենք անգամ մը ևս դիմել Ձերդ Սրբության Մեր սույն գրով, այն հույսով, թե Դուք ևս, առաջնորդված նույն գիտակցությամբ, պիտի հաճիք բաժնել կանոնական-սկզբունքային տեսակետը, որ մեր լուսաբնակ նախնյաց անխախտ կեցվածքն է եղած Հայ Եկեղեցվո ավելի քան հազար վեց հարյուր տարիներու պատմության ընթացքին:

Հայ Եկեղեցին միշտ և ամեն տեղ, մեկ ու անբաժան և միասնական՝ Ս. Էջմիածնի աստվածային օրհնության ներքև, և գլխավորությամբ Ամենայն Հայոց ընդհանրական Հայրապետության. ահա՛ մեր Եկեղեցվո նուիրապետական կառուցվածքի ոգեկան հիմքը, ահա՛ մեր ժողովուրդի հոգևոր և բարոյական կյանքի գերագույն կանոնը, ահա՛ մեր եկեղեցական-ազգային իղձերու իրականացման գերագույն երաշխիքը:

Մեր Եկեղեցվո և ժողովուրդի ալեկոծ անցյալը, մեր ներկան և մանավանդ մեր ապագան մեզի ամենուս կթելադրեն ապրիլ և գործել ա՛յս ոգիով, հստակ, վճռական և աներեր կերպով:

Բարի մաղթանքներով և եղբայրական սիրով, Ձերդ Սրբության աղոթակից՝

ՎԱՉԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

18 օգոստոս 1964

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ ՍՐԲՈ ԷՋՄԻԱԾՆԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհավարդ Եղբայր ի Քրիստոս.

Ստացանք Ձեր 18 օգոստոս 1964 թվակիր և 743 թվահամար նամակը Ադդիս-Աբեբայի մեջ գումարվելիք արևելյան ուղղափառ եկեղեցիներու պետերու համաժողովին մասին:

Ուրախությունն ունինք հայտնելու Ձերդ Սրբության, որ Մենք ևս Նորին Վեհափառություն Եթովպիո Կայսեր՝ Հայլե Սելասիե Ա-ի կողմե հրավեր ստացած ենք և սիրահոժար ընդառաջած Նորին Վեհափառության հրավերին: Կհավատանք, որ սույն համաժողովը կարևոր հանգրվան մը պիտի ըլլա, տիեզերական առաջին երեք ժողովները ընդունող Արևելյան մեր քույր եկեղեցիներուս ներկա կյանքին մեջ առավել ևս ամրացնելու և սերտացնելու մեր փոխադարձ հարաբերությունները:

Մեր 27 մայիս 1964 թվակիր և 413/64 թվահամար նամակին մեջ հայտներ էինք արդեն Ձերդ Վեհափառության, որ Մեր Աթոռի անկախ դիրքին որպես բնական հետևություն, վերոհիշյալ համաժողովին պիտի մասնակցեինք առանձին պատվիրակությամբ: Վստահ ենք, որ ընդհանրական բնույթ կրող հարցերու մեջ Ձերդ Ս. Օծությունը և Մենք, Մեկի ընկերացող պատվիրակությանց հետ միասին, առաջնորդված Քրիստոսի սուրբ կրոնով և ամուր կառչած Հայաստանյայց Ս. Եկեղեցվո միության գերարժեք սկզբունքի վրա, պիտի ունենանք միասնական կեցվածք և միասնական տեսակետ:

Ահա այս հասկացողությամբ և որոշումով, չենք կրնար համաձայն գտնվիլ Ձեր առաջարկած մասնակցության ձևին:

Ուստի, պիտի խնդրեինք Ձերդ Վեհափառութենեն, որ Մեր առանձին պատվիրակությամբ մասնակցության որոշումը ըմբռնեիք որպես վորացում Հայաստանյայց Եկեղեցվո Ադդիս-Աբեբայի համաժողովին մեջ: Եվ լիահույս ենք, որ Մեր վույգ Հայրապետներուս ներկայությունը հիշյալ համաժողովին մեջ նշանակալից և արդյունավոր մասնակցություն մը պիտի ըլլա, և որով պիտի կարենանք վորավոր և ազդեցիկ ընծայել Հայաստանյայց Եկեղեցվո ձայնը միջեկեղեցական այս հանդիպումին մեջ:

Մաղթելով Ձեզի քաջառողջ և երջանկալից երկար կյանք և լիակատար հաջողություն Ձեր եկեղեցանվեր բոլոր ծրագիրներուն և գործերուն մեջ, մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ
29 հոկտեմբեր 1964